ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՄԱԿԱՐՅԱՆ ՎԵՆԵՐԱ ՌԱԴԻԿԻ

ՊԱՏՄԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՍԻՐԻԱՅԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԸ 16-18-ՐԴ ԴԴ.

Է.00.02 «Համաշխարհային պատմություն, միջազգային հարաբերություններ» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2019

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում

Գիտական ղեկավար՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Ա. Պ. Փոլադյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Ռ. Կ. Կարապետյան

պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
Հ. Մ. Քոչարյան

Առաջատար կազմակերպություն՝ **ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

Պաշտպանությունը կայանալու է 2019 թ. մայիսի 17-ին, ժամը 15:00-ին, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում գործող ԲՈԿ-ի՝ Համաշխարհային պատմություն 006 մասնագիտական խորհրդի նիստում (հասցեն՝ 0019, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագին առաքված է 2019 թ. ապրիլի 6-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝

պատմական գիտությունների թեկնածու Գ. Ա. Մարգարյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Աշխարհի տարբեր մասերում գտնվող հայ համայնքների պատմության ուսումնասիրությունը մշտապես արդիական է և կարևոր հայոց պատմության համալիր ուսումնասիրման առումով: Ուստի, 16-18-րդ դդ. պատմաաշխարհագրական Սիրիայի[1] հայ համայնքի ուսումնասիրության արդիականությունը նախ և առաջ պայմանավորված է նրանով, որ մինչ օրս նյութի համապարփակ քննություն չի կատարվել: Ատենախոսության թեման հատկապես արդիական է դառնում հետևյալ հարցերի ուսումնասիրությամբ՝ ա) *միլլեթ*[2] համակարգը, որը ներառում է հայկական *միլլեթի* շրջանակում ամբողջ կայսրության հայապատկան սեփականությունների (հատկապես եկեղեցիների և եկեղեցապատկան հողերի) տնօրինման իրավունքի ուսումնասիրությունը, որոնց համար հիմք են եղել տարբեր ժամանակներում հենց օսմանյան սուլթանների կողմից տրված հրամաններն (*ֆերման*) ու արտոնագրերը (*բերաթ*), բ) *շարիաթական* դատարանների արձանագրություններում առկա քրիստոնյաների նկատմամբ խտրականության դրսևորումները, գ) պատմաաշխարհագրական Սիրիայի հայերի սոցիալ-տնտեսական կարգավիճակը և դ) օսմանյան տնտեսության մեջ պատմաաշխարհագրական Սիրիայի հայերի դերը: Նշյալ հարցերի քննությունը կատարվել է կայսրության ողջ հայությանը վերաբերող սոցիալ-տնտեսական խնդիրների տեսանկյունից, որը կարող է իր համեստ նպաստն ունենալ Հայոց ցեղասպանության և Հայոց պահանջատիրության հիմնախնդիրների լուծման գործընթացում:

---

[1]Պատմաաշխարհագրական Սիրիան՝ Ասորիքը կամ Բիլադ ալ-Շամը Սիրիայի Արաբական Հանրապետության տարածքից բացի ընդգրկում էր նաև ժամանակակից Պաղեստինի, Իսրայելի, Հորդանանի և Լիբանանի տարածքները: Այն տարածվում էր Ամանոսյան լեռներից մինչև Եգիպտոսի սահմանները, Միջերկրական ծովից՝ Սիրիական անապատ և հյուսիս-արևելքից սահմանակից էր պատմական Հայաստանին: **Masters B.,** Christians and Jews in the Ottoman Arab World, Cambridge University Press, 2001, p. 49. **Հովհաննիսյան Ն.,** Արաբական երկրների պատմություն, հ. 2, Զանգակ 97, Երևան, 2004, էջ 77: **Թոփուզյան Հ.,** Սիրիայի և Լիբանանի հայկական գաղթօջախների պատմություն (1841-1946), ԳԱ հրատ., Երևան, 1986, էջ 7:

[2]«*Միլլեթ*» արաբերեն բառ է (ملّة), որը նշանակում է ազգ, ազգություն: Օսմանյան կայսրությունում այն ուներ այլ իմաստ՝ մատնանշում էր կայսրության՝ էթնոդավանական սկզբունքով կազմավորված ոչ մուսուլման համայնքները: Եզրույթի բացատրությունը մանրամասն տե՛ս **Ortaylı İ.**, Osmanli Imparatorluğu'nda Millet Sistemi Türkler, Cilt 10, Ankara, 2002, [s.216-220] (pdf. p. 393-399) p. 394,http://www.meliksah.edu.tr/msen/wp-content/uploads/2014/06/turkler-cilt-10.splitted-and-merged.pdf /22.08.2015/.

Ատենախոսության նպատակը և խնդիրները: Աշխատանքի նպատակն է ներկայացնել 16-18-րդ դդ. պատմաաշխարհագրական Սիրիայի հայ համայնքի պատմությունը, տեղի հայերի կարգավիճակն Օսմանյան կայսրության՝ հայության նկատմամբ վարած քաղաքականության համատեքստում:

Ելնելով այս ըմբռնումից՝ առաջ են քաշվել հետևյալ խնդիրները.

- Ուսումնասիրել պատմաաշխարհագրական Սիրիայում հաստատված օսմանյան վարչակարգը, Բարձր Դռան ու տեղական իշխանությունների միջև հարաբերությունները, պարզել նրանց միջև կառավարման փոխհամաձայնեցվածության, ինչպես նաև կենտրոնական իշխանության՝ տեղական իշխանությունների վրա վերահսկողության և ազդեցության աստիճանը:
- Ուսումնասիրել պատմաաշխարհագրական Սիրիայի հայերի կարգավիճակը, վեր հանել այդ կարգավիճակի առանձնահատկությունները:
- Ընդգծել այդ առանձնահատկություններին նպաստող գործոններն ու դրանց պատճառահետևանքային կապը:
- Ուսումնասիրել 16-18-րդ դդ. տեղի հայ համայնքի քանակական և որակական զարգացումները, ձեռքբերումներն ու կորուստները:
- Ներկայացնել միջհամայնքային հարաբերություններում հայ համայնքի կարգավիճակը, ինչպես նաև նրա դերն ու կշիռը կայսրության տնտեսական և մշակութային կյանքում:

Եվ, վերջապես, այս բոլոր կետերի ուսումնասիրության արդյունքում՝

- ընդգծել 16-18-րդ դդ. պատմաաշխարհագրական Սիրիայի հայության կարգավիճակի վրա օսմանյան կենտրոնական իշխանության ազդեցության գործոնի աստիճանը,
- պարզել նշված ժամանակաշրջանում օսմանյան իշխանությունների՝ հայ հպատակների նկատմամբ որդեգրած հատուկ քաղաքականության և դրա հիմքում էթնիկ դրդապատճառների առկայության հավանականությունը:

Ատենախոսության ժամանակագրական սահմանները: Աշխատանքի ժամանակագրական սահմաններն ընդգրկում են 16-18-րդ դդ.: 16-րդ դարում պատմաաշխարհագրական Սիրիան նվաճվեց Օսմանյան կայսրության կողմից և այստեղ հաստատվեց օսմանյան վարչակարգ: 16-18-րդ դարերում կայսրության այլադավանների համար մշակվեցին և կիրառության մեջ դրվեցին սոցիալական և իրավական հստակ կարգեր, որոնց կանոնակարգման համար գործում էր *միլլեթ* համակարգը: 16-18-րդ դարերը համարվում են նաև կայսրության հարաբերական կայունության ժամանակաշրջանը, երբ հպատակներն ապրում էին «Օսմանյան խաղաղության» (Pax Ottomanica) մեջ: Ժամանակագրական ընտրությունն ունի որոշ շեղումներ, ինչպես նախորդող, այնպես էլ հաջորդող դեպքերի առումով, որոնք անհրաժեշտ են մի շարք իրադարձություններ ավելի ամբողջական տեսքով ներկայացնելու համար:

Ուսումնասիրության փաստական նյութը: Ատենախոսության շարադրման համար հիմնաքարային նշանակություն ունեն հայկական, արաբական, ինչպես նաև եվրոպական սկզբնաղբյուրները: Հայկական սկզբնաղբյուրներից թեմայի վերաբերյալ ամենաընդարձակ տեղեկությունները հաղորդում է Սիմեոն դպիր Լեհացին իր Ուղեգրության մեջ[3]:

Արաբական սկզբնաղբյուրների շարքում բացառիկ են Քամիլ իբն Հուսեյն իբն Մուստաֆա Բալի ալ-Հալաբիի (հայտնի որպես ալ-Ղազի) «Ոսկու գետը Հալեպի պատմության մեջ» եռահատոր աշխատության առաջին և երրորդ հատորները[4]: 18-րդ դդ. Դամասկոսի և տեղի քրիստոնյաների մասին հետաքրքիր ու արժեքավոր տեղեկություններ ենք գտնում հույն ուղղափառ քահանա Խուրի Միխայիլ Բարիք ալ-Դիմաշկիի «Դամասկոսի պատմությունը (1720-1782 թթ.)» աշխատությունում[5]: 1741-1762 թթ. Դամասկոսի ժամանակագրությունն ու դեպքերի համապատասխան զարգացումը ներկայացված է ալ-Դիմաշկիի ժամանակակից Շիհաբ ալ-դին Ահմադ իբն Բըդիր ալ-Բուդայրիի (հայտնի որպես ալ-Հալակ) «Դամասկոսի ամենօրյա դեպքերը» աշխատության մեջ[6]:

Թեմայի ուսումնասիրության համար աղբյուրագիտական կարևոր նշանակություն ունեն Օսմանյան կայսրության տարբեր շրջաններում հաստատված եվրոպացի պաշտոնյաների հուշագրությունները:

Ատենախոսության շարադրման համար անչափ հարուստ և արժեքավոր աղբյուր է ծագումով շոտլանդացի, մասնագիտությամբ ֆիզիկոս, բնագետ Ալեքսանդր Ռասսելի «Հալեպի բնական պատմությունը» աշխատությունը[7]:

Աղբյուրագիտական նշանակությամբ առանձնանում են 17-րդ դարի ֆրանսիացի ճանապարհորդ, դիվանագետ Լորան դ'Արվիոյի հուշագրությունները: 1658-1666 թթ. Լևանտյան երկրներով իր

---

[3]**Սիմէոն դպիր Լեհացւոյ** Ուղեգրութիւն, Տարեգրութիւն եւ հիշատակարանք, ուսումնասիրեց և հրատարկեց Հ. Ներսես Վ. Ակինյան Մխիթարեան ուխտէ, Մխիթարյան տպարան, Վիեննա, 1936:

[4]**كامل بن حسين بن مصطفى بالى الحلبى الشهير بالغزي**, نهر الذهب في تاريخ حلب, الجز الاوال , طبع في المطبعة المرونية بحلب ,1923,

և նույնի՝

الجز الثالث , طبع في المطبعة المرونية بحلب .1926.

[5]**خوري مخايل بريك الدمشقي**, تاريخ الشام (1720-1782), وثائق تاريخية للكرسي الملكي الانطاكي,

http://www.kadl.sa/pdfviewer.aspx?filename=5fogxoj0kqsfn2fhp7pzsa2ejzdfwcthuoxigtlfsjwlyap1/04.02.2016/cxhfbzm34yw2xno8

[6]**البديري الحلاق**, حوادث دمشق اليومية,

www.jouhinabooks.com/get_file.php?id=628/8.30.2017/.

[7]Տե՛ս **Russel Al.,** The natural history of Aleppo, Printed for A. Millar, in the Strand, MDCCCLVL, London, 1756.

ճանապարհորդության, ինչպես նաև 1679-1686 թթ. Հալեպում՝ որպես Ֆրանսիայի հյուպատոս պաշտոնավարման տարիների նրա հուշերը տպագրվել են միայն նրա մահվանից (1702 թ.) հետո: 1717 թ. դրանց մի մասը հրատարկվում է Ժան դե լա Ռոքի մշակմամբ[8]: Դ'Արվիոյի հուշագրությունների ամբողջական տարբերակը վեց հատորով հրատարակվել է 1735 թ.՝ Ժան Բապտիստ Լաբատի աշխատասիրությամբ[9]:

Օսմանյան կայսրության տարբեր ժամանակաշրջանների, դեմքերի և դեպքերի վերաբերյալ բազում ուսումնաիրություններ են կատարել և՛ հայ և՛ օտարազգի հետազոտողները, մասնավորապես՝ Մ. Չամչյանը[10], Ղ. Ինճիճյանը[11], Ն. Հովհաննիսյանը[12], Ա. Սաֆրաստյանը[13], Ռ. Սաֆրաստյանը[14], Վ. Բայբուրդյանը[15], Մ. Զուլալյանը[16], Հ. Սիրունին[17], Տ. Սավալանյանը[18], Ա. Եպիսկ.

---

[8]Voyage fait par ordre du roy Louis XIV, dans la Palestine, vers le grand Emir, chef des princes arabes du desert, connus sous le nom de Bedoüins, ou d'Arabes Scenites... Avec la Description generale de l'Arabie, faite par le sultan Ismaël Abulfeda, traduite en françois sur les meilleurs manuscrits, avec des notes. Par Monsieur D. L. R./ **Laurent D'Arvieux, La Roque**, 1717, http://gallica.bnf.fr/ark:/12148/bpt6k85333m/f1.image /23.01.2018/.

[9]**D'Arvieux L.,** Mémoires du Chevalier d'Arvieux, envoyé extraordinaire à la Porte, Consul d'Alep, d'Alger, de Tripoli et autres Échelles du Levant,tom sixième, par le R.P. Labat J.-B., chez Charles-Jean-Baptiste Delespine, le Fils, Libraire, rue S. Jacques, vis-à-vis la rue des Noyers, à la Victoire, Paris, 1735.

[10]**Չամչեանց Մ.,** Պատմութիւն Հայոց: Ի սկզբանէ աշխարհի մինչև ցամ Տեառն 1784, հ. Գ, Վենէտիկ, 1786:

[11]**Ինճիճեան Ղ.,** Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, հ. Ե., Ի վանս սրբոյն Ղազարու, Ի Վենէտիկ, 1804:

[12]**Հովհաննիսյան Ն.,** Արաբական երկրների պատմություն, հ. 2, Զանգակ 97, Երևան, 2004, ինչպես նաև նույնի՝ հ. 4., Զանգակ 97, Երևան, 2007:

[13]Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, հ. Ա., թարգմանություն թուրքերեն բնագրերից, ներածությունով, ծանոթագր., տերմինաբանական բառարանով և հավելվածով կազմեց՝ **Սաֆրաստյան Ա.,** Երևան, Հայկական ՍՍՌ ԳԱ, 1961, ինչպես նաև նույնի՝ հ. Բ., Հայկական ՍՍՌ ԳԱ, Երևան, 1964, նաև՝ Թուրքական աղբյուրներ, Էվլիյա Չելեբիի ուղեգրությունը, հ. Գ., թարգմանություն բնագրերից, առաջաբան և ծանոթագրություններ՝ **Սաֆրաստյանի Ա.,** Հայկական ՍՍՌ ԳԱ, Երևան, 1967:

[14]**Սաֆրաստյան Ռ.,** Օսմանյան կայսրություն. ցեղասպանության ծրագրի ծագումնաբանությունը (1876-1920), Լուսակն, Երևան, 2009:

[15]**Բայբուրդյան Վ.,** Օսմանյան կայսրության պատմություն, ԵՊՀ հրատ., Երևան, 2011:

[16]**Զուլալյան Մ.,** Արևմտյան Հայաստանը XVI-XVIII դդ., Հայկական ՍՍՀ ԳԱ, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1980:

[17]**Սիրունի Յ.**, Պոլիս եւ իր դերը, հ. 1, տպարան Մեսրոպ, Պէյրութ, 1965, նույնի՝ հ. 2, տպարան Մեսրոպ, Պէյրութ, 1970, ինչպես նաև՝ Պոլիս եւ իր դերը, «Էջմիածին», Ի. տարի, № 4, Ս. Էջմիածին, 1963, էջ 33-34:

Հովհաննիսյանը[19], Ա. Խառատյանը[20], Լ. Վարդանը[21], Է. Սեմերճյանը[22], արևմտյան և թուրք հեղինակներ՝ Ֆ. Հիթթին[23], Ա. Հաուրանին[24], Կ. Իմբերը[25], Դ. Քուաթերթը, Բ. Մասթերսը[26], Հ. Ինալջըքը[27], Ջ. Վ. Սթրիփլինգը[28], Ս. Փամուքը[29],

---

[18]**Սաւալանեանց Տ.,** Պատմութիւն Երուսաղէմի, գրաբար բնագիրէն աշխարհաբարի վերածեց Մեսրոպ Եպիսկոպոս Նշանեան, հ. 1-2, Տպարան Սրբոց Յակոբեանց, Երուսաղէմ, 1931:

[19]**Հովհաննէսեանց Ա. Տ.,** Ժամանակագրական պատմութիւն Ս. Երուսաղէմի, հ. Ա.-Բ., Ի տպարան Առաքելական Աթոռոյ Սրբոց Յակովբեանց, Յերուսաղէմ, 1890:

[20]**Խառատյան Ա.,** Կոստանդնուպոլսի հայ գաղթօջախը, Երևանի համալսարանի հրատ., Երևան, 2007:

[21]**Վարդան Լ.,** Հարկերը Օսմանեան եւ Պարսկական կայսրութիւններուն մէջ (ԺԵ-Ի դար), Ա-Ի, ԳԱԹ հրատ., Երեւան, 2004, նույնի՝ Լ-Հ եւ Հ-Ֆ, հ. Բ., Պէյրութ, 2012, ինչպես նաև՝ Խտրականութիւնը Օսմանեան կայսրութեան մէջ, Հայկազեան հայագիտական հանդէս, խմբ. Ե. Հ. Քասունի, Ատլաս Պրէսս, Պէյրութ, 1970:

[22]**Սեմերճեան Է.,** Հայկական կեանքը արդի Հալէպի վաղ օսմանեան ժամանակաշրջանին, Ուսումնասիրական փորձ մը՝ հայ ընկերային կեանքի պատմութեան կառուցման համար՝ իսլամական աղբիւրներու օգտագործման առնչութեամբ, «Տաթեւ» հայագիտական տարեգիրք, թ. 1, Հալէպ, 2008, էջ 257-290, ինչպես նաև՝ Armenian Women, Legal Bargaining, and Gendered Politics of Conversion in Seventeenth- and Eighteenth Century Aleppo, Journal of Middle East Women's Studies, March, 2016, pp. 2-30; Sinful Professions: Illegal Occupations of Women in Ottoman Aleppo, Syria, Brill Academic Publishers; Koninklijke Brill NV, Leiden; Springer Science+Business Media, 2003-03, pp. 60-85.

[23]**Hitti Ph.,** History of the Arabs, 90 Tottenham Court Road, Printed in China, London, 2002, ինչպես նաև՝ تاريخ سورية ولبنان وفلسطين, الجزء الثاني, دار الثقاف, بيروت, 1983.

[24]**Hourani A.,** A History of the Arab Peoples, Grand Central Publishing, New York- Boston, 1992.

[25]**Imber C.,** The Ottoman Empire, 1300-1650, The Structure of Power, Printed and bound in Great Britain by Mackays of Chatham, Palgrave macmillan, 2002, նույնի՝ Ebu'ssu'ud, The Islamic Legal Tradition, Stanford University Press, Stanford, California, 1997; Zina in Ottoman Law, Collection Turcica III: Contribution a l'Histoire Economique at Sociale de l'Empire Ottoman, Leuven: Peeters, 1983, pp. 59–91.

[26]**Masters B.,** Christians and Jews in the Ottoman Arab World, Cambridge University Press, 2001; Mawali Bedouin Confederation, in Encyclopedia of the Ottoman Empire, ed. by Masters B., Ágostin G., New York: Facts on File, 2009, pp. 353–354;

[27]**Quataert D.,** The Ottoman Empire, 1700-1922, Second Edition, Cambridge University Press, 2005. **Inalcik H., Quataert D.,** An Econimic and Social History of the Ottoman Empire, 1300-1600, vol. 1, Cambridge University Press, 1994.

[28]**Stripling G.W.F.,** The Ottoman Turcs and Arabs, Illions Studies in the Social Siences, vol. XXVI, № 4, Urbana, 1942.

[29]**Pamuk S.,** Institutional Change and the Longevity of the Ottoman Empire, 1500-1800, The Journal of Interdisciplinary History, vol. 35, № 2, Autumn, 2004, pp. 225-247, http://www.jstor.org/stable/3656813/06.05.2015/; **Özmucur S., Pamuk S.,** Real Wages and Standards of Living in the Ottoman Empire, 1489-1914, The Journal of Economic History, vol.

ինչպես նաև արաբ պատմաբաններ Ն. Քաթթանը[30], Աբդ ուլ-Քարիմ Ռաֆեկը[31] և Քամալ Սալիբին[32]:

Սույն ատենախոսության մեջ քննարկվող այնպիսի հարցերի ուսումնասիրման համար, ինչպիսիք են հայկական *միլլեթը*, Հայոց եկեղեցու իրավունքները, ներեկեղեցական զարգացումները, կայսրության տարբեր շրջաններում աշխարհաքաղաքական զարգացումների անդրադարձները, ներհամայնքային իրադարձությունները և այլն, լավագույն և կարևորագույն աղբյուրներ են արխիվային փաստաթղթերը: Ուստի, վերոնշյալ հարցերի քննության համար օգտագործել ենք Մաշտոցյան Մատենադարանի (այսուհետ՝ ՄՄ) արխիվի «Կաթողիկոսական դիվան»-ի հայերեն և օսմաներեն վավերագրերը, որոնք օսմանյան սուլթանների կողմից բարձրաստիճան հայ հոգևորականներին՝ Էջմիածնի կաթողիկոսներին, Կ. Պոլսի, Երուսաղեմի պատրիարքներին տրված *ֆերմաններ, բերաթներ* և հայ հոգևորականների նամակագրություններ են: Սույն ատենախոսության մեջ առաջին անգամ օգտագործվել են Հալեպի *շարիաթական* դատարանի արձանագրություններ, որոնք այժմ ընդգրկված են ՄՄ արխիվի «17-19-րդ դդ. արաբերեն և օսմաներեն վավերագրերի անմշակ ֆոնդ»-ում:

Պատմաաշխարհագրական Սիրիայի հայ համայնքի պատմության ուսումնասիրման գործում (ներառյալ նաև 16-18-րդ դդ.) իրենց մեծ ներդրումն ունեն հայ գաղթօջախների պատմության նշանավոր գիտակներ Ա. Ալպոյաճյանը[33], Ա. Աբրահամյանը[34], Վ. Միքայելյանը[35], իսկ Կ. Սարաֆյանը[36], Ս.

62, № 2, Jun., Cambridge University Press on behalf of the Economic History Association, 2002, pp. 293-321, http://www.jstor.org/stable/2698182/30.05.2015/.

[30]**Al-Qattan N.**, Dhimmis in the Muslim Court: Legal Autonomy and Religious Discrimination, International Journal of Middle East Studies, Vol. 31, № 3, Aug., Cambridge University Press, 1999, pp. 429-444; Textual Differentiation in the Damascus Sijil, Religious Discrimination or Politics of Gender, in Women, the Family, and Divorce Laws in Islamic History, ed. by Sonbol, Amira El Azhary, New York: Syracuse University Press, 1996, pp. 191-201,

[31]**رافق عبد الكريم**, دمشق العربي في العهد العثماني ,مطابع موسسة الوحدة , 1982 -1981,

ինչպես նաև՝ Public Morality in the 18th Century ottoman Damascus. In: Revue du monde musulman et de laMéditerranée, №55-56, 1990. pp. 180-196; Craft Organization, Work Ethics, and the Strains of Change in Ottoman Syria, Journal of the American Oriental Society, vol. 111, №3, Jul.-Sep., 1991, pp. 495-511.

[32]**Salibi K.,** Middle Eastern Parallels: Syria-Iraq-Arabia in Ottoman Times, Middle Eastern Studies, vol. 15, №1, Jan., Taylor & Francis, Ltd., 1979,pp. 70-81, http://www.jstor.org/stable/4282730 /02.09.2014/; The Secret of the House of Ma'n, Int. J. Middle East Stud. 4, Printed in Great Britain, 1973, pp. 272-287.

[33]**Ալպոյաճեան Ա.,** Պատմութիւն հայ գաղթականութեան, հ. Բ., տպ. Նոր Աստղ, Կահիրէ, 1955:

Վարժապետյանը[37], Ա. արք. Սյուրմեյանը[38], Հ. Թոփուզյանը[39], Ա. Սանջյանը պատմաաշխարհագրական Սիրիայի առանձին հայ համայնքների պատմության ուսումնասիրության ամբողջական աշխատություններ են հրատարակել:

Ատենախոսության թեմայի ուսումնասիրման հարցում հատկանշական է Ա. Սանջյանի «Սիրիայի հայ համայնքն օսմանյան տիրապետության տակ» խորագրով անգլերեն աշխատությունը[40]: Այստեղ հեղինակը փորձ է կատարել ընդհանուր կերպով ներկայացնելու պատմաաշխարհագրական Սիրիայի խոշոր հայ համայնքի տնտեսական, մշակութային պատմությունը՝ առանց քաղաքական ենթատեքստի: Ա. Սանջյանի նշմամբ՝ այս աշխատության թեմայի ուսումնասիրության շրջանակը չի ներառում օսմանյան վարչական համակարգի և ոչ էլ օսմանյան թեորիայի (որով կառավարվում էին նվաճված ժողովուրդները, հատկապես փոքրամասնությունները) լուսաբանումը[41]: Հեղինակն առանձնակի ուշադրության է արժանացրել և առանձին գլուխներով ներկայացրել այնպիսի հարցերի քննությունը, ինչպիսիք են Երուսաղեմի Հայոց պատրիարքության հաստատումը, նրա իրավական կարգավիճակը, հայա-պատկան սրբավայրերի պահպանությունը, պատրիարքության նվիրատվությունների կարգը, Կիլիկիո կաթողիկոսությունը, Հալեպի

---

[34]**Աբրահամյան Ա.,** Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, հ. Ա., Երևան, Հայպետհրատ, 1964, ինչպես նաև նույնի՝ հ. Բ,, Երևան, Հայպետհրատ, 1967:

[35]Հայ գաղթաշխարհի պատմություն (միջնադարից մինչև 1920 թ.), Եռահատորյակ, հ. 1, հրատ. պատրաստեց և խմբագրեց պատմական գիտ. դոկ. պրոֆ., ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս **Միքայելյան Վ.,** ՀՀ ԳԱԱ «Գիտություն», Երևան, 2003, ինչպես նաև նույնի՝ հ. 2, ՀՀ ԳԱԱ «Գիտություն», Երևան, 2003:

[36]**Սարաֆեան Գ.,** Պատմութիւն Անթէպի հայոց, հ. Ա., Լոս Անճէլըս, Գալիֆորնիա, 1953, ինչպես նաև նույնի՝ հ. Բ., Լոս Անճէլըս, Գալիֆորնիա, 1953 և A Brief History of Aintab, Printed in the United States of America, 1957.

[37]**Վարժապետեան Ս.,** Հայերը Լիբանանի մէջ, Պատմութիւն Լիբանահայ Գաղութի՝ Հնագոյն Դարերէն մինչեւ Ա. ընդհ. պատերազմին վերջաւորութիւնը, Լիբանահայ Նախապատերազմեան (1914) գաղութի հրատ., Պէյրութ, 1951:

[38]**Սյուրմեյան արք. Ա.,** Պատմութիւն Հալէպի հայոց, հ. Ա., Սիրիա, տպ. Անի, Ա. Էքմեքճեան, Հալեպ, 1940, ինչպես նաև նույնի՝ հ. Բ., «Հալէպ», Բեյրութ, 1946, տպարան Մ. Մագուտեան, նույնի՝ հ. Գ. (Քննական, 1355-1908), Փարիզ, 1950, և Ցուցակ Հայերէն Ձեռագրաց Հալէպի Ս. Քառասուն Մանկունք Եկեղոցւոյ եւ Մասնաւորաց, հ. Ա., Տպարան Սրբոց Յակոբեանց, Երուսաղէմ, 1935:

[39]**Թոփուզյան Հ.,** Սիրիայի և Լիբանանի հայկական գաղթօջախների պատմություն (1841-1946), Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1986:

[40]**Sanjian A.,**The Armenian Communitiesin Syria under Ottoman Dominion, Harvard University Press, Cambridge, Masshachusetts, 1965.

[41]Նույն տեղում, էջ 31:

եպիսկոպոսությունը և Հայկական հարցն ու նրա ազդեցությունը Մեծ Սիրիայի հայ համայնքի վրա:

Նշված աշխատանքի շրջանակում հեղինակը, որպես իր ուսումնասիրության խնդրո առարկա վերցնելով միայն վերոնշյալ հարցերի լուսաբանումը, ցավոք, չի կարևորել տեղի օսմանահպատակ հայ համայնքի կարգավիճակի ուսումնասիրությունը քաղաքական տեսանկյունից, իսկ համայնքին վերաբերող մի շարք հարցերի քննությունը կատարված է շատ մակերեսորեն և շարադրված հիմնականում հայկական սկզբնաղբյուրների և հայ հեղինակների աշխատությունների հիման վրա:

Ատենախոսության գիտական նորույթը: Չնայած հայ գաղթօջախների պատմության ուսումնասիրության շրջանակում հայ և օտարազգի մի շարք հեղինակներ անդրադարձել են 16-18-րդ դդ. պատմաաշխարհագրական Սիրիայի հայ համայնքին վերաբերող տարբեր հարցերի, սակայն ատենախոսության թեման համակողմանի ուսումնասիրված չէ: Հայաստանի և Սփյուռքի գիտնականներն իրենց հետազոտություններում հիմնականում անդրադարձել են տվյալ ժամանակահատվածում նշված տարածքներում հայ գաղթականների հաստատման ժամանակափուլերին, տեղաշարժերին, հայ համայնքի հոգևոր-մշակութային կյանքին, մշակութային ժառանգությանը, լեզվական առնչություններին և այլն:

Սույն ատենախոսության մեջ փորձ է արվել համակողմանի ուսումնասիրելու պատմաաշխարհագրական Սիրիայի հայության կարգավիճակը՝ կայսրության քրիստոնյա հպատակների նկատմամբ օսմանյան իշխանությունների վարած քաղաքականության համատեքստում: Նման մոտեցումը թույլ է տվել առանձնացել պատմաաշխարհագրական Սիրիայի հայերի կարգավիճակի առանձնահատկությունները, դրանց պատճառներն ու հետևանքները:

Ուսումնասիրության մեթոդները: Ատենախոսությունը շարադրված է տարաբնույթ և բազմալեզու սկզբնաղբյուրների, ուսումնասիրությունների և գիտական հոդվածների հիման վրա՝ պատմաքննական, պատմահամեմատական վերլուծությունների և տիպականացման եղանակներով, հաճախ նաև՝ տվյալների համակցության սկզբունքով: Եզրահանգումներն արված են առկա փաստական նյութի հիման վրա:

Ատենախոսության տեսական և գործնական նշանակությունը: Աշխատանքի նյութը գործնականում կարող է կիրառվել բարձրագույն կրթական հաստատություններում Մերձավոր Արևելքի հայ համայնքների պատմության, ինչպես նաև Օսմանյան կայսրության վերաբերյալ դասախոսություններում և հետազոտություններում:

Ատենախոսության մեջ առաջ քաշված հիմնական դրույթները կարող են օգտակար լինել Հայաստանի Հանրապետության արտաքին

քաղաքականության մերձավորարևելյան ուղղության առանձին ասպեկտներ մշակելու տեսանկյունից:

Ատենախոսության փորձաքննությունը: Ատենախոսության հիմնական արդյունքներն ու դրույթներն արտացոլված են հրատարկված ութ հոդվածներում: Աշխատանքը քննարկվել է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի Արաբական երկրների բաժնում և երաշխավորվել հրապարակային պաշտպանության:

Ատենախոսության կառուցվածքը եվ բովանդակությունը: Ատենախոսության կառուցվածքը բխում է առաջադրված նպատակներից, քննարկվող խնդիրներից և արդյունքներից: Այն բաղկացած է ներածությունից, երեք գլխից՝ համապատասխան ենթագլուխներով, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից:

Ներածության մեջ ներկայացվում է թեմայի արդիականությունը, նպատակն ու խնդիրները, ատենախոսության ժամանակագրական սահմանները, մեթոդաբանական հիմքը, գիտական նորույթը, աղբյուրների և գրականության տեսությունը:

ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽԸ՝ «ՊԱՏՄԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՍԻՐԻԱՅԻ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ, ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԵՎ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԸ ՕՍՄԱՆՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ (16-18-ՐԴ ԴԴ.)», բաղկացած է 2 ենթագլխից:

Առաջին ենթագլխում՝ «Բիլադ ալ-Շամի հայ գաղութները նախաօսմանյան շրջանում: Պատմական ակնարկ», համառոտ ներկայացվում է դեպի պատմաաշխարհագրական Սիրիայի տարբեր շրջաններ հայերի կատարած հիմնական արտագաղթերը (7-11-րդ դդ. և 14-րդ դար), դրանց արդյունքում ձևավորված տեղի՝ նախաօսմանյան շրջանի հայկական գաղթօջախները, որոնք օսմանյան տիրապետության 16-18-րդ դդ. վերածվեցին ձևավորված համայնքների:

Երկրորդ ենթագլխում՝ «Պատմաաշխարհագրական Սիրիայի վարչատարածքային բաժանումը, կառավարման առանձնահատկությունները և տեղի հայ համայնքը 16-18-րդ դդ.», օսմանյան վարչատարածքային կառավարման համատեքստում առանձնացվում են պատմաաշխարհագրական Սիրիայի վարչական համակարգի կառուցվածքի և տեղական կառավարման առանձնահատկությունները և այդ առանձնահատկությունների ազդեցությունը տեղի մուսուլման և ոչ մուսուլման բնակչության՝ այդ թվում նաև հայերի կարգավիճակի վրա:

Օսմանյան նվաճումից հետո պատմաաշխարհագրական Սիրիայում ձևավորվեցին Հալեպի, Դամասկոսի և Տրիպոլիի *էյալեթ*ները[42] (Eyalet, նաև՝ *փաշա*ություն- pashalik կամ *բեյլերբեյ*ություն- beylerbeylik)՝ նահանգները կամ քաղաքային վարչական շրջանները[43]: *Էյալեթ*ներն իրենց հերթին բաժանվում էին ավելի փոքր տարածքային միավորների՝ *սանջակ*ների (سنجق, Sancak) կամ *լիվա* (لواء, Liwa) համապատասխանում է գավառին)՝ *սանջակբեյ*երի (Sancak bey) գլխավորությամբ[44], *կազա*ների (قضاء, Kazâ - գավառակ կամ փոքր շրջանը)[45]՝ *կայմակամ*ների (قائمقام, Kaymakam), և *նահիյա*ների (ناحية, Nahiye-վարչական համայնք)՝ *մուդիր*ների (مدير, հոգ. مدراء, Müdür) գլխավորությամբ[46]:

Նշված որոշ շրջաններում կենտրոնական իշխանության անհետևողական և թույլ հսկողությունը հանգեցրեց արդեն իսկ գոյություն ունեցող տեղական իշխանությունների պահպանմանը և նորերի առաջացմանը:

Արդյունքում, պատմաաշխարհագրական Սիրիայի տարբեր շրջաններում կենտրոնաձիգ իշխանություն չգործեց: Հակառակը՝ տարբեր շրջաններում հաստատված տեղական իշխանությունները հանդես էին գալիս ոչ միայն

---

[42]**Salibi K.,** Middle Eastern Parallels: Syria-Iraq-Arabia in Ottoman Times, p. 75, ինչպես նաև՝ **حتي.ف**, նշվ. աշխ., էջ 801: Խոշորագույն վարչատարածքային միավոր բնորոշող «*Էյալեթ*» եզրույթը կիրառության մեջ է մտել դեռևս 1365- 1867 թ.: Տե՛ս **Somel S. A.,**The A to Z of the Ottoman Empire, The A to Z Guide Series, № 152, Scarecrow Press, Inc. Lanham. Toronto.Plymouth, UK, 2010, p. 88. Իսկ 1867-1922 թթ. «*Էյալեթ*» եզրույթը վերանվանվեց «*վիլայեթ*» եզրույթի: Սակայն *վիլայեթ*ները համեմատաբար ավելի փոքր տարածքային միավորներ էին, քան *էյալեթ*ները, և կառավարվում էին *վալի*ների կողմից (ولى): Տե՛ս **Eroğlu C., Babuçoğlu M., Köçer M.,** Osmanli Vilayet Salnamelerinde Halep, Ankara, 2007, s. 18, **Հովհաննիսյան Ն.,** նշվ. աշխ., հ. 2, էջ62: Հարկ է նշել սակայն, որ և՛ «*վիլայեթ*» և՛ «*վալի*» տերմիններն ավելի տարածված են (հատկապես արաբական շրջանների դեպքում), և դրանք լայնորեն գործածվում են հայ և օտարալեզու գրականության մեջ նույնիսկ մինչև 1867 թ. (վարչական շրջանների վերանվանումը) իրադարձությունների նկարագրության ժամանակ:

[43]Տե՛ս **Սյուրմեյան արք. Ա.,** Պատմութիւն Հալէպի հայոց, հ. Բ., էջ 489, 536-537, **Stripling G.W.F.,** նշվ. աշխ., էջ 50-51, **Bakhit M. A.,** The Christian Population of the Province of Damascus in the Sizteenth Century, ln Christians and Jews in the Ottoman Empire: the functioning of a plural society, ed. Benjamin Braude and Bernard Lewis, vol. 1, New York: Holmes & Meier Publishers, 1982, (pp. 19-66), at 19:

[44]**Հովհաննիսյան Ն.,** նշվ. աշխ., հ. 2, էջ 62-63: «*Սանջակ*» թուրքերենից թարգմանաբար նշանակում է դրոշակ: Տե՛ս **Բայբուրդյան Վ.,** նշվ. աշխ., 66:

[45] *Կազա*ները բաղկացած էին մի խումբ փոքր գյուղերից: Դրանցից յուրաքանչյուրը ղեկավարվում էր *մուկտարի* կողմից, որը գավառային վարչակարգի ամենացածր պաշտոնն էր: Տե՛ս **Mordecai L.,** Governing the Holy Land: Public Administration in Ottoman Palestine, 1516-1918, University of Wisconsin-Milwaukee, United States, 2000, pp. 1-17 at 6.

[46]Տե՛ս Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, հ. Բ, էջ 216-218:

որպես փաստացի ինքնավար հակակշիռ ուժ կենտրոնական իշխանությունների նկատմամբ, այլև անհանդուրժող կեցվածք էին որդեգրել միմյանց հանդեպ: Ուստի, 16-18-րդ դդ. պատմաաշխարհագրական Սիրիան դարձել էր տարածքային մեծ հավակնություններ ունեցող տեղական իշխանությունների հակամարտությունների թատերաբեմ, որտեղ շատ հաճախ անգամ օսմանյան բանակն էր անզոր:

Պատմաաշխարհագրական Սիրիայի կառավարման այս առանձնահատուկ համակարգի արդյունքում տեղի հպատակ ժողովուրդների կարգավիճակն ու բարօրությունը մեծապես կախված էր տեղական իշխանությունների վարած քաղաքականությունից, որի անմիջական պատասխանատուները *փաշա*ներն էին:

ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽԸ՝ «ՊԱՏՄԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՍԻՐԻԱՅԻ ՀԱՅԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ», բաղկացած է 2 ենթագլխից:

Առաջին ենթագլխում՝ «Հայկական *միլլեթը* և հայ համայնքի հոգևոր-կրոնական կյանքը», ներկայացվում է Հայկական *միլլեթ*ի ստեղծման պատմությունը, պատճառներն ու նպատակները, *միլլեթ*ի շրջանակում կայսրության հայության, այդ թվում նաև՝ պատմաաշխարհագրական Սիրիայի հայ համայնքի, ինչպես նաև Հայ եկեղեցու ունեցած իրավունքները և դրանց ազդեցությունը տեղի հայերի հոգևոր-կրոնական կյանքի զարգացման վրա:

Օսմանյան վարչական համակարգը բաղկացած էր երկու հիմնական բաժանումներից՝ տարածքային (պրովինցիաներ) և դավանական: Եվ քանի որ պետությունը ժողովրդին դասակարգում էր ոչ թե ըստ էթնոլեզվական, այլ՝ կրոնական պատկանելության, հետևաբար, կայսրության ոչ մուսուլման բնակչությունը, բաժանված էր դավանական երեք համայնքների՝ *միլլեթ*ների՝ հույն-ուղղափառ, հայ-առաքելական և հրեական:

Միլլեթները ներհամայնքային կյանքում օրինական ինքնավարություն էին վայելում և ենթարկվում էին *միլլեթ բաշի*ին (համայնքի առաջնորդին), այսինքն՝ յուրաքանչյուրն իր կրոնական համայնքի պատրիարքին կամ ռաբիին: Հոգևոր համայնքը քաղաքական կառուցվածք ուներ և ոչ մուսուլման համայնքի համար ինքնության աղբյուր էր[47]:

Հայկական *միլլեթ*ի կազմավորման սկիզբը համարվում է 1461 թ., այսինքն՝ Կ. Պոլսի Հայոց պատրիարքության ստեղծման թվականը, երբ Սուլթան Մեհմեդ II-ը (1444-1446, 1451-1481 թթ.), Կ. Պոլիս հրավիրելով Բուրսայի Հովակիմ

[47]**Öztürk F.,ÖztürkF.**,The Ottoman Millet System, p. 73, www.journals.istanbul.edu.tr/iugaad/article/download/5000063916/5000059858 /23.08.2015/.

եպիսկոպոսին, նրան շնորհել է պատրիարքի տիտղոս և կայսրության հայերի վրա հոգևոր ու քաղաքական իշխանություն[48]:

Կ. Պոլսի Հայոց պատրիարքի իրավասությունը տարածվում էր նաև կայսրության միաբնակ բոլոր համայնքների վրա (ասորի հակոբիկյան, ղպտի և եթովպական), որոնք, սակայն, ունեին իրենց ազգային հոգևոր առաջնորդները[49]:

Երկրորդ ենթագլուխը՝ «Հայերի իրավական կարգավիճակն ըստ *շարիաթական* դատարանների արձանագրությունների», ամբողջությամբ շարադրված է Մաշտոցյան Մատենադարանում պահվող Հալեպի շարիաթական դատարանների վավերագիր արձանագրությունների (արաբ.՝ سجل, հոգ.՝ سجلات, թուրք.՝ siğil) և կամ նմատիպ այլ արձանագրությունների վերաբերյալ կատարված ուսումնասիրությունների հիման վրա: Ուստի, առկա նյութի շրջանակում համեմատական քննության է առնվել առհասարակ Օսմանյան կայսրության և մասնավորապես պատմաաշխարհագրական Սիրիայի մուսուլման – ոչ մուսուլման բնակչության իրավական կարգավիճակը, ոչ մուսուլմանների նկատմամբ խտրականության, այդ թվում նաև՝ արձանագրություններում հանդիպող «բնագրային խտրականության» երևույթները: Նշված վավերագրերը որպես պաշտոնական փաստաթղթեր, նաև հիմք դարձան տեղի հայ համայնքի ներհամայնքային կյանքի տարբեր իրադարձությունների լուսաբանման, և անգամ պատմական բացերի լրացման համար:

Սույն ենթագլխում, արդեն իսկ ուսումնասիրված վիճակագրական տվյալների հիման վրա, ներկայացվում են նաև Օսմանյան կայսրության տարբեր շրջաններում ոչ մուսուլմանների՝ շարիաթական դատարաններ դիմելու դրդապատճառները: Խնդիրն այն է, որ Կ. Պոլսի Հայոց պատրիարքին շնորհված ներհամայնքային և քրիստոնյա միջհամայնքային գործերի կարգավորման իրավունքի շրջանակում գործել են նաև *Միլլեթ* դատարաններ: Սակայն, այդ հարցերի կարգավորման համար, որպես օսմանահպատակ, կայսրության ոչ մուսուլմաններն իրավունք ունեին ընտրելու նաև *շարիաթական* դատարանը (maḥkama), որի դեպքում մուսուլման դատավորի՝ *կադիի*, վճիռները հիմնվում էին Իսլամական իրավունքի վրա: Որոշ դեպքերում էր միայն *շարիաթական* դատարան դիմելն անխուսափելի, օրինակ, եթե

---

[48]**Gündüz A.,** İstanbul'un Osmanlılar Tarafından Fethi, Türk- İslam ve Avrupa Açısından Önemi, Karadeniz Araştırmaları, Cilt: 5, Sayı: 17, Bahar 2008 (s.51-66), s. 61. Տե՛ս նաև՝ **Sanjian A.,** նշվ. աշխ., էջ 32, **Միրունի Յ.,** Պոլիս եւ իր դերը, «Էջմիածին», էջ 29:

[49]**Sanjian A.,** նշվ. աշխ., էջ 32-33, տ ե՛ս նաև՝ **Ortaylı İ.,** նշվ. աշխ., էջ 396, The Cambridge History of Turkey, vol. 3, 1603- 1839, ed. by **S. Faroqhi,** Cambridge University Press, 2006, p. 273-274:

կողմերից մեկը մուսուլման էր կամ ներգրավված էր քրեական գործում կամ հայցը վերաբերվում էր հասարակական կարգի խախտմանը:

Այդուամենայնիվ, *շարիաթական* դատարանների արձանագրությունների ուսումնասիրությունը երևան է հանում մեծ թվով հպատակ ոչ մուսուլմանների հայցեր, որոնք, անգամ *Միլլեթ* դատարանին դիմելու այլընտրանքի դեպքում, իրենց խնդիրների լուծումը փնտրել են *շարիաթական* դատարաններում:

ԵՐՐՈՐԴ ԳԼՈՒԽԸ՝ «ԱՅԼԱԴԱՎԱՆ ՀՊԱՏԱԿՆԵՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿՆ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ 16-18-ՐԴ ԴԴ.. ՀԱՅԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿՆ ՈՒ ՆՐԱՆՑ ԴԵՐԸ ՊԱՏՄԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՍԻՐԻԱՅԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔՈՒՄ», սկսվում է ներածական մասով, որտեղ ընդհանրական ձևով ներկայացնում ենք 16-18-րդ դդ. պատմաաշխարհագրական Սիրիայի երեք *էյալեթ*ներում ոչ մուսուլման հպատակների քանակական պատկերը, և առհասարակ կայսրության այլադավանների տեղն ու դերը Օսմանյան կայսրության սոցիալական կառավարման համակարգում:

Առաջին ենթագլխում՝ «Միջհամայնքային հարաբերությունները պատմաաշխարհագրական Սիրիայում և հայերի սոցիալական կարգավիճակը», համեմատական քննության մեթոդով ներկայացվում է պատմաաշխարհագրական Սիրիայում և Օսմանյան կայսրության այլ շրջաններում 16-18-րդ դդ. հաստատված միջհամայնքային հարաբերությունները: Նշվում են նաև քրիստոնյաների համար սահմանված հարկատեսակները, սոցիալական կարգերը և դրանց պահպանման կանոնները, ըստ որոնց որոշվում էր նրանց տեղն ու դերը կայսրության տարաէթնիկ հասարակության մեջ: Առանձնակի ուսումնասիրության է արժանացել պատմաաշխարհագրական Սիրիայի հայերի դավանափոխության հավանականության, դրդապատճառների և հետևանքների հարցը:

Պատմաաշխարհագրական Սիրիայի քրիստոնյաները, որպես կայսրության *զիմմի* բնակչության բաղկացուցիչ մաս, պարտավոր էին հետևել *Շարիա*յով, Օմարի դաշինքով, ինչպես նաև օսմանյան կանոնադրությամբ սահմանված ընդհանուր օրենքներին և կանոններին: Այնուամենայնիվ, դրանք պատմաաշխարհագրական Սիրիայում կիրառվում էին մասնակի վերապահումներով, ինչը պայմանավորված էր տեղի վարչական կառավարման առանձնահատկություններով (տե՛ս 1.2):

Այդպիսով, համեմատաբար բարենպաստ կարգավիճակում գտնվող պատմաաշխարհագրական Սիրիայի հայերի շրջանում դավանափոխության դեպքերը բավական նվազ էին, թեև ոչ բոլորովին բացառված:

Երկրորդ ենթագլխում՝ «Հայերի դերը պատմաաշխարհագրական Սիրիայի տնտեսական և մշակութային կյանքում», ներկայացվում է պատմաաշխարհագրական Սիրիայի տնտեսական և մշակութային կյանքում

*ռայայ*ի կարգավիճակում գտնվող հայերի ունեցած ձեռքբերումները, նրանց դերն ու նշանակությունը, ինչպես նաև նրանց նպաստը տեղի համայնքի պահպանման և զարգացման գործում:

Ըստ այդմ՝ նշվում է, որ Օսմանյան կայսրության քրիստոնյաներն ու հրեաները հանդուրժելի էին իշխանությունների կողմից ոչ միայն որպես «Գրքի ժողովուրդ», այլև շնորհիվ օսմանյան տնտեսության զարգացման գործում ունեցած իրենց մեծ նպաստի: Չնայած մուսուլմանների՝ նրանց նկատմամբ ունեցած իրավական և բարոյական մեծ առավելության, կայսրության քրիստոնյաները և մասնավորապես պատմաաշխարհագրական Սիրիայի հայերը կարողացան ոչ միայն ներգրավվել տնտեսության տարբեր ոլորտներում, այլ նաև զբաղեցնել նշանակալի, երբեմն նաև առաջատար դիրքեր:

16-18-րդ դդ. պատմաաշխարհագրական Սիրիայի մեծ և կենսունակ որոշ քաղաքներ կարողացան դիմակայել նաև կայսրությունում տիրող համատարած տգիտության մարտահրավերին և գոնե իրենց համայնքի ներսում ապահովել կրթությունը և արվեստի որոշ բնագավառների իմացությունն ու կիրառումը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ: Ատենախոսության թեմայի ուսումնասիրությունը հանգեցնում է մասնավորապես հետևյալ եզրակացությունների.

1. 16-րդ դարի վերջից Օսմանյան կայսրության թուլացումն իր անմիջական անդրադարձն ունեցավ վարչատարածքային կառավարման համակարգի վրա: Կայսրության կառավարման անարդյունավետությունը հանգեցրեց ներքին երկպառակությունների, սուլթաններն աստիճանաբար կորցրին իրենց վերահսկողությունը պատմաաշխարհագրական Սիրիայի տարածքում, ինչի հետևանքով առանձին վարչական միավորներ դե ֆակտո դարձան ինքնավար: Իսկ տեղի հպատակ ժողովուրդների ճակատագիրը փաստացի հանձնվեց տեղական իշխանությունների քմահաճույքին:

2. 16-18-րդ դդ. ընթացքում օսմանյան իշխանությունների քաղաքականությունը կայսրության հայության նկատմամբ հիմնված էր ոչ թե ազգային, այլ դավանական սկզբունքների վրա:

3. *Միլլեթ*ների կազմավորմամբ օսմանյան իշխանությունները՝

ա. դյուրացնում էին տարրաէթնիկ և բազմադավան հպատակների կառավարումը, քանի որ այդպիսով յուրաքանչյուր էթնոդավանական խումբ իշխանությունների առաջ ներկայանում էր որպես մեկ ամբողջություն, որի անմիջական միջնորդը, պատասխանատուն և երաշխավորը Բարձր Դռան առաջ *միլլեթ* բաշին էր:

բ. Միլլեթ համակարգի գործունեությունն օսմանյան իշխանությունների համար նաև ոչ մուսուլման հպատակների սահմանափակ իրավունքները

վերահսկելու և նրանց նկատմամբ կիրառվող խտրականությունները քողարկելու լավագույն միջոցն էր:

գ. Հայոց պատրիարքի՝ որպես *միլլեթ*ի հոգևոր և աշխարհիկ առաջնորդի ընտրությունը նպատակ էր հետապնդում կտրել-զատելու օսմանահպատակ տվյալ էթնոկրոնական խումբը իր մյուս հատվածից (կամ հատվածներից) և սահմանափակելու այդ երկու հատվածները միավորող համազգային հոգևոր առաջնորդի ազդեցությունը կայսրության հպատակների վրա: Այդպիսով օսմանյան իշխանությունները նվազեցնում էին նաև համազգային միավորման և ազգային-ազատագրական պայքարների առաջացման ռիսկերը:

4. Օսմանյան հասարակական, վարչական և կրոնական համակարգերի որևէ մարմնին վերաբերող անգամ չնչին հայցերը գտնվել են *շարիաթական* դատարանների իրավասության ներքո, ինչն էլ կասկածի տակ է դնում *միլլեթ* համակարգի մաս կազմող *Միլլեթ* դատարանների գործունեությունն ու գոյությունն առհասարակ: Սակայն,

ա. կարելի է պնդել, որ պատրիարքի ենթակայության ներքո գործող մի մարմին, այնուամենայնիվ, իրավունք է ունեցել կայացնելու նեղ ներհամայնքային կյանքին վերաբերող որոշումներ՝ ամուսնության, ծնունդի, կնունքի, թաղման վկայականներ տալու, ընտանեկան կամ ներհամայնքային մանր վեճեր լուծելու և այլն:

բ. Միլլեթ համակարգի շրջանակում նախատեսված այդ թերի կամ մասնակի ինքնավար մարմինը (կամ նույն *Միլլեթ* դատարանը, որի գոյության մասին նշում են որոշ հեղինակներ) նույնպես մաս էր կազմում օսմանյան վարչահամակարգի, որի միջոցով վերահսկվում էին անգամ նեղ ներհամայնքային հայցերն ու վճիռները:

գ. Օսմանյան կայսրության ոչ մուսուլմանների՝ իրենց հայցերը (նույնիսկ *Միլլեթ* դատարանին իրավասու հայցերը) *շարիաթական* դատարաններում բավարարելու նախընտրությունը պայմանավորված էր հիմնականում այն հանգամանքով, որ տվյալ երկրում գործող գերակա, «անքննելի», «անվիճարկելի» օրենքին ապավինելով, որպես քաղաքացի նրանք իրենց առավել պաշտպանված էին զգում, քան *Միլլեթ* դատարաններին դիմելու պարագայում, որի արձակած որոշումներն ամեն րոպե կարող էին վիճարկվել և վերանայվել օսմանյան իշխանությունների կողմից:

5. Պատմաաշխարհագրական Սիրիայի բնակչության, այդ թվում նաև հայության զարգացումն ընթանում էր տեղի ինքնավար իշխանությունների վարած քաղաքականությանն զուգընթաց: Ուստի,

ա. Տեղական վարչահամակարգի կողմից ոչ մուսուլմաններին ընձեռնված որոշակի ազատությունների և տնտեսական բարենպաստ պայմանների արդյունքում 16-18-րդ դդ. պատմաաշխարհագրական Սիրիայի հայության

համեմատական աճ է երևում և ազգային, մշակութային արժեքների պահպանության բարձր մակարդակ:

բ. Ազգային և կրոնական համայնքների համեմատական ազատ ինքնադրսևորմանը նպաստում էին նաև օտարերկրյա պաշտոնյաների մշտական ներկայությունը պատմաաշխարհագրական Սիրիայի մի շարք քաղաքներում, նրանց ազդեցությունը տեղի պետական կառավարման մարմինների գործունեության և հասարակության կենսաձևի վրա, ինչպես նաև տեղի հայ արիստոկրատիայի դերն ու կշիռը Սիրիայի քաղաքների զարգացման և կառավարման գործում:

6. Չնայած *զիմմի*ի կարգավիճակին՝ պատմաաշխարհագրական Սիրիայի հայերը, Արևմուտքի հետ կրոնական և մշակութային սերտ կապերի, լեզվական իմացության և ինքնակրթության շնորհիվ, հաղթահարելով համընդհանուր անհավասարությունը, խտրականություններն ու արգելքները, կարողացան հասնել նշանակալի ձեռքբերումների, զբաղեցնել տնտեսական էլիտայի կարգավիճակ պատմաաշխարհագրական Սիրիայի և ողջ Օսմանյան կայսրության մասշտաբով:

Ատենախոսության թեմայով հրատարակվել են՝

1. Մակարյան Վ., Ալի իբն Աբու Թալիբի՝ քրիստոնյաներին տրված երաշխավորագիրը,-Լևոն Խաչիկյան, 90, Նյութեր Մատենադարանի հիմնադիր տնօրենի ծննդյան իննսունամյակին նվիրված միջազգային գիտաժողովի, «Նաիրի», Երևան, 2010, էջ 170-173:
2. Մակարյան Վ., Խեչո Մ., Շարիա դատարանների արձանագրությունները հալեպահայության կարգավիճակի վերաբերյալ (17-19-րդ դդ.) (ըստ Մաշտոցյան Մատենադարանի արաբերեն վավերագրերի տվյալների), Բանբեր Մատենադարանի, № 23, «Նաիրի», Երևան, 2016, էջ 194-208:
3. Մակարյան Վ., Կիլիկիոյ Ազարիայ Կարկառեցու հակաթոռութեան թուականը (ԺԷ.-ԺԸ. դդ.) (ըստ Հալէպի Շարիա դատարանի արաբերէն արձանագրութեան), Հայկազեան հայագիտական հանդէս, Բեյրութ, 2017, էջ 465-472:
4. Մակարյան Վ., Հայ կինը օսմանյան Սիրիայում (XVI-XIX դդ.), «Հայագիտության հարցեր» հանդես, 1(13), ԵՊՀ հրատ., Երևան, 2018, էջ 24-38:
5. Մակարյան Վ., Հայկական միլլեթի կազմավորումը և Կ. Պոլսի Հայոց պատրիարքների իրավասությունները (ԺԵ.-ԺԹ. դդ.), Էջմիածին, օգոստոս, Ս. Էջմիածին, 2016, էջ 111-132:

6. Մակարյան Վ., Պատմական Սիրիայի կրոնական համայնքների կարգավիճակը և միջհամայնքային հարաբերությունները (XVI-XVIII դդ.), Բանբեր Մատենադարանի, հ. 25, «Նաիրի», Երևան, 2018, էջ 268-276:

7. Մակարյան Վ., Օսմանյան իշխանությունների քաղաքականությունը Սիրիայում և տեղի հայերը (XVI-XVIII դդ.), Հայաստանը և Արաբական աշխարհը. Պատմություն և արդի խնդիրներ (Երիտասարդական միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու), Պատմության ինստիտուտ, Երևան, 2014, էջ 104-114:

8. Makaryan V., On the Date of Alternative Catholicos Azaria Karkaretsi of Cilicia (17th -18th) (According to the Arabic Inscription of the Aleppo Sharia Court's Document), Reveiw of Armenian Studies, № 2, 2018, Yerevan, Printing House of the "Gitutuyn" Publishing of the NAS RA, pp. 13-21.

ВЕНЕРА РАДИКОВНА МАКАРЯН

АРМЯНСКАЯ ОБЩИНА ИСТОРИКО-ГЕОГРАФИЧЕСКОЙ СИРИИ В XVI-XVIII ВВ.

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.02 «Всемирная история, международные отношения». Защита состоится 17-го маяа 2019 года в 15:00, на заседании специализированного совета 006 «Всемирная история» действующего при Институте востоковедения Национальной Академии Наук РА (0019, Ереван, пр. Маршала Баграмяна 24/4).

РЕЗЮМЕ

Диссертация посвящена изучению истории армянской общины историко-географической Сирии, статуса местных армян в контексте политики, проводимой по отношению к армянам в Османской империи.

Основная цель работы – изучение социально-экономического и правового статуса армян историко-географической Сирии. Для составления цельной картины проведен сравнительный анализ положения всех иноверных поданных Османской империи.

Диссертация состоит из введения, трёх глав, с соответствующими подзаголовками, выводов и списка использованной литературы. В введении представлена актуальность темы, цель и задачи исследования, его хронологические рамки, методологическая основа, научная новизна, источники и обзор литературы.

В первой главе ***«Административно-территориальное деление историко-географической Сирии, её система управления и армянская община в османский период (XVI-XVIII вв.)»***, представлены основные этапы эмиграции армян в историко-географическую Сирию, в результате которых образовались местные армянские общины доосманского периода. В контексте османской административно-территориальной системы управления выделяются структура и особенности управления историко-географической Сирией и отмечается влияние этих особенностей на местное мусульманское и немусульманское население, в том числе и на статус армянской общины.

Во второй главе ***«Правовой статус армян историко-географической Сирии»*** представлены история, причины и цели создания армянского «миллета» (этно-религиозной общины), в рамках «миллета» права османских армян, в том числе и

армянской общины историко-географической Сирии, а также Армянской церкви, и их влияние на развитие духовно-религиозной жизни местных армян.

В этой главе представлен сравнительный анализ правового статуса мусульманского и немусульманского населения Османской империи в целом и историко-географической Сирии в частности. Также приведены примеры дискриминации по отношению к немусульманскому населению, в том числе и встречающейся в записях «текстуальной дискриминации» (например, преднамеренное искажение правописания собственных имен, и т.д.).

Третья глава ***«Статус иноверных поданных в Османской империи в XVI-XVIII вв.; социальный статус и роль армян в экономической и культурной жизни историко-географической Сирии»***. Она начинается вводной частью, в которой в общей форме представлена численность немусульманских подданых в трёх «эялетах» (административных единицах) историко-географической Сирии в XVI-XVIII вв., а также их место и роль в системе социального управления Османской империей.

Далее представлен сравнительный анализ межобщинных отношений, установившихся в историко-географической Сирии и в других областях Османской империи в XVI-XVIII вв., подробно описаны разновидности налогов, установленных для христиан, социальные порядки и правила их соблюдения. Особое внимание уделено вопросу вероотступничества, его причин и последствий.

В этой главе пресдставлены также достижения армян, имеющих статус «райа» (подданного народа), в экономической и культурной жизни историко-географической Сирии, их роль и вклад в сохраненииие и развитие местной общины.

В последней части диссертации приводятся основные выводы, итоги и заключения диссертации.

VENERA RADIK MAKARYAN

THE ARMENIAN COMMUNITY OF HISTORICAL-GEOGRAPHICAL SYRIA IN 16th – 18th CENTURIES

The defense of the dissertation will take place at 15:00, on 17th of May, 2019, at the meeting of the Specialized Council 006 "World History" at the Institute of Oriental Studies of NAS RA. Address: Yerevan, 0019, Marshal Baghramyan ave, 24/4. The dissertation is submitted for the pursuing of the Scientific Degree of the Doctor of Philosophy in the Field of "World History, International Relations" 07.00.02.

SUMMARY

The dissertation is devoted to the study of the history of the Armenian community of historical-geographical Syria, the status of local Armenians in the context of the policy pursued towards the Armenians in the Ottoman Empire.

The main purpose of the research is to study the socio-economic and legal status of Armenians of historical-geographical Syria. In order to compile a complete picture of the abovementioned issues, a comparative analysis of the status of all subjected peoples of different confessions of the Ottoman Empire was implemented.

The dissertation consists of the introduction, three chapters with their subtitles, conclusions and bibliography.

The introduction presents the relevance of the topic, its purpose and problems, the chronological frames of the research, its methodological basis, scientific novelty, sources and literature review.

The first chapter, entitled ***Administrative-Territorial Division, Governance System of Historical-Geographical Syria and the Armenian Community in the Ottoman Period (16th – 18th centuries)***, presents the main phases of the emigration of Armenians to historical-geographical Syria at different periods, which led to the formation of the local Armenian communities of the pre-Ottoman period. In the context of the Ottoman governance system, the structure and specific aspects of the administration of historical-geographical Syria are highlighted and the influence of these features on the local Muslim and non-Muslim population including the status of the Armenian community is emphasized.

The second chapter, entitled ***The Legal Status of the Armenians of Historical-Geographical Syria***, presents the history, causes and goals of creating the Armenian "millet" (ethno-religious community), the rights of the Ottoman Armenians within

the framework of the "millet", including the both Armenian community of historical-geographical Syria and the Armenian Church, and their influence on the development of the spiritual and religious life of local Armenians.

In the chapter a comparative study of the legal status of the Muslim and non-Muslim population of the Ottoman Empire in general and in the historical-geographical Syria in particular was conducted. The cases of discrimination against the non-Muslim population such as the phenomena of "textual discrimination" were studied

The third chapter, entitled ***The Status of the Ottoman Empire' s Subjected People of Different Confessions in the 16th -18th Centuries; the Social Status and Role of Armenians in the Economic and Cultural Life of Historical-Geographical Syria***, devoted to the study of non-Muslim peoples in the three "eyalets" (administrative unities) of the historical-geographical Syria in the 16th -18th centuries, their place and role in the social and economic system, inter-communal relations established between the communities. The types of taxes established for Christians, the social order and the rules for their observance were presented. Particular attention is paid to the issue of apostasy, its causes and consequences.

The chapter also presents the achievements of Armenians holding the status of "raya" (subject people) in the economic and cultural spheres of historical- geographical Syria, their role and importance, as well as their contribution to the preservation and development of the local community.

In conclusions of the dissertation are contained in the last section.